

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզպետի 07.07.2011թ թիվ 63 կարգադրությամբ ստեղծված «Գենդերային հարցերով զբաղվող» Շիրակի մարզային հանձնաժողովի 2014թ.չորրորդ ընդլայնված նիստի
18.12.2014թ.

1. Օրակարգ 1. Հանձնաժողովի նախագահի համառոտ գնահատականը 2014թ-ին կատարված աշխատանքների մասին
/Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ Հ. Արշակյան/
2. Տարեկան հաշվետվություն <<Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության>> և <<Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման>> ազգային ծրագրերի շրջանակներում մարզային միջոցառումների վերաբերյալ
/Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ Լ. Գինոսյան/
- 3 <<Ընտանեկան բռնության գոհերի ուղղորդման մեխանիզմները>> ծրագրի վերաբերյալ
/Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Լ. Գորգինյան/

3. Քննարկում

4. Այլ հարցեր

1. Լսեցին՝ Հանձնաժողովի նախագահ, մարզպետի տեղակալ Հ. Արշակյանին, ով ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց օրակարգի հարցերը: Օրակարգը հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից հաստատվեց միաձայն:
2. Լսեցին՝ Հանձնաժողովի նախագահ, մարզպետի տեղակալ Հ. Արշակյանին, ով համառոտ ներկայացրեց հանձնաժողովի տարվա ընթացքում կատարած աշխատանքները:
3. Լսեցին՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ Լ. Գինոսյանին, ով ներկայացրեց հաշվետվություն <<Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության>> և <<Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման>> ծրագրերի շրջանակներում մարզում կատարված աշխատանքների վերաբերյալ:
4. Լսեցին՝ հանձնաժողովի քարտուղար Լ. Գորգինյանին, ով խոսեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և <<Կանանց ռեսուրս կենտրոն>> ՀԿ-ի համատեղ <<Ընտանեկան բռնության գոհերի ուղղորդման մեխանիզմները>> ծրագրի արդյունավետության մասին:

Արտահայտվեցին՝

1. Հայկուշ Ավետիսյանը

Նա խոսեց տարվա ընթացքում կանանց վերարտադրողական առողջության պահպանման նպատակով իրականացրած հետազոտությունների մասին, նշեց, որ հետազոտություն է անցել 3402 կին:

2. Ամալյա Ադամյանը

Նա նշեց, որ զբաղվածության բոլոր ծրագրերն իրականացվել են. Աշխատանքի է տեղավորվել 738 մարդ, աշխատանքային պրակտիկայում ընդգրկվել է 25 աշխատանք փնտրող, մասնագիտական ուսուցում է անցել 40 անձ, սահմանափակ կարողությունների տեր 21 անձ ընդգրկվել է պետական տարբեր ծրագրերում:

3. Կարինե Գրիգորյանը

Նա հավելեց, որ իրենց ծրագրերում նախատեսված միջոցառումները նույնպես իրականացվել են ամբողջությամբ. սահմանափակ կարողություններ ունեցող 500 անձի համար կազմակերպվել են իրազեկման դասընթացներ:

4. Լիլիթ Գորգինյանը

Նա նշեց, որ <<Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիայի>> կողմից իրականացվել է <<Լիդերության դպրոց>> ծրագիրը, 25 կին ստացել է հավաստագիր դասընթացների մասնակցելու համար:

Նիստը որոշեց.

1. Կատարված աշխատանքը համարել բավարար և նախապատրաստվել նոր ծրագրի դրույթների իրականացմանը:
2. Հանձնաժողովի նախագահը շնորհավորեց բոլորին գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Արշակյան

Քարտուղար՝

Լ. Գորգինյան